

դահլիճին մէջ. անոր ընթերցումը յանձնեց նոյն Ս. Ժողովի տեղապահ Արհ. Գերպ. Արթուրյան: Զինքը շրջապատած էին Արհ. արքեպիսկոպոսներ՝ Թեոփ. Տէր-Աբրահամեան, Քէտիճեան. երկու Մխիթարեան Միաբանութիւններու՝ Վե. նետկոյ և Վիեննայի Ընդհանրական Արհի Աբրահամեանը՝ Ուլուհոճեան և Հապովեան. Գերյարգելի բարձրաստիճան եկեղեցականներու հոծ բազմութիւնը, Արեւելեան եկեղեցւոյ Ս. Ժողովոյն պաշտօնեաները, արեւելքի պատրիարքներու Ընդհանուր Գործակալները, Մխիթարեան Ուսանողարանի և Լեւոնեան Քահանայապետական Հայ Վարժարանի բոլոր Հայրերը և Վարդապետները և աշակերտութիւնը. ուրիշ ազգերու վարժարաններու ներկայացուցիչները, «Հաւատոյ Ծաւալման» միջազգային Վարժարանի սաները, հուսկ բազմաթիւ արգային և օտար աշխարհական ներկայացուցիչներ:

Սհաւաստիկ Սրբազան Պապին Քարտուղարութենէն զրկուած պաշտօնական Զեկոյցը.

SEGRETERIA DI STATO
DI SUA SANTITÀ

Dal Vaticano
18 Febbraio 1946

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒԳԱՐՈՒԹԻՒՆ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ

Վատիկան
18 փետրուար 1946

La Santità di Nostro Signore nel Concistoro Segreto di questa mattina si è benignamente degnata di elevare alla Dignità Cardinalizia Sua Eccellenza Reverendissima Monsignor

Gregorio Pietro XV Agagianian
Patriarca di Cilicia degli Armeni

Tale grazioso atto di Sovrana Considerazione del Santo Padre si partecipa al Signor Cardinale Agagianian, per sua intelligenza e norma.

G. BATTISTA MONTINI
Sostituto

Sua Eccellenza Reverendissima
Monsignor Gregorio Pietro XV Agagianian
Patriarca di Cilicia degli Armeni

Յաջորդ էջին վրայ կը գնենք նաեւ պաշտօնական Հրովարտակ-Վճիռը իր լատիններէն բնագրով և հայ թարգմանութեամբ, - ուր կը տեսնուի Կարդինալական Պատուին վայելած իրաւունքները, առանձնաշնորհութիւնները, և այլն... - իբրեւ պատմական վաւերացում և իբրեւ ամբողջացուցիչ տեղեկութիւն այդպիսի բացառիկ իրողութեան մը ներքին մանրամասնութիւններուն:

Սրբազան Տէրն մեր, այս առաւօտեան Գաղտնի Համաժողովին մէջ, բարեհաճած է բարձրացնել Կարդինալական Պատուին՝ Սրհ. Գերապայծառ.

Գրեգոր Պետրոս Ժե. Աղաճանեան
Պատրիարք Հայոց Տանն Կիլիկիոյ

Սրբազան Հօր գերագոյն նկատողութեան այս ազնիւ գործը կը հաղորդուի առ Տ. Ծիրանաւոր Ա.Ղ.Ա.ՃԱՆԵԱՆ, ի գիտութիւն և ի կանոն.

Յ. ՄԿՐՏԻՉ ՄՈՆԻԴԻՆԻ
Փոխանորդ

Առ Արհիպատիւ Տէր
Գերպ. Գրեգոր-Պետրոս Ժե. Աղաճանեան
Պատրիարք Հայոց Տանն Կիլիկիոյ

Romae

In Palatio Apostolico Vaticano
Feria II^a die XVIII^a mensis Februarii
MCMXLVI

SS.mus Dominus Noster
creavit et publicavit S. R. E. Presbyterum Cardinalem
Gregorium-Petrum XV. Agagianian
Patriarcham Ciliciae Armenorum

ipsumque Reverendissimorum eiusdem S. R. E. Cardinalium Coetui et Collegio favorabiliter aggregavit, cum omnibus et singulis honoribus, favoribus, oneribus, facultatibus, praerogativis, privilegiis et indultis solitis et consuetis, necnon cum clausulis necessariis et opportunis.

Pro S. R. E. Cancellario

✠ J. Card. GRANITO PIGNATELLI di BELMONTE
Decanus Sacri Collegii

(Timbro)
Cancellaria Apostolica

Ի Հոռոմ
Ի Վատիկանեան Առաքելական Պալատի
Յերկուշարաթի ի 18-ում աւուր ամսեան փետրուարի
1946

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՐՆ ՄԵՐ
ստեղծ և հրատարակեաց ի Քարտինալ Քահանայ Ս. Հ. Եկեղեցւոյ
ԶԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՃԱՆԵԱՆ
զՊատրիարքն Հայոց Տանն Կիլիկիոյ

և զնա սիրով միաւորեալ դասեաց ի կարգս արգոյապատիւ Ծիրանաւորաց Ս. Հ. Ե. ամենայն և իւրաքանչիւր պատուովք, շնորհօք, պարտուք, իշխանութեամբք, գերադասութեամբք, ազատութեամբք, յառաջամասնութեամբք, առանձնաշնորհութեամբք, սովորական և ընկալեալ արտօնութեամբք, որպէս և հարկաւոր և պատշաճաւոր պայմանովք:

Փոխանակ Դիւանագարի Ս. Հ. Ե.

✠ Գ. Կարգ. ԿՐԱՆԻԴՈՅ ՓԻՆԻԱԿԵԼԼԻ տի ՊԵԼՄՈՆԻԵ
Կարգեւեց Ծիրանաւորաց Դատուն

(Կնիք)
Առաքելական Դիւանատուն

Վսեմափայլ Ծիրանաւոր Հոգեւոր Տէրը, յետ շնորհակալ ըլլալու աւետա-
բերին, գոհութեան ուղերձ մը բարձրացուց նախ աստուածային Նախախնամու-
թեան, որ զինքն իր մատղաշ հասակէն կովկասեան ձիւնապատ լեռներու ծոցէն
բերած ու անկած էր Հոռմայ սրբազան հոգին վրայ՝ Պիոս Ժ. Սրբազան Քա-
հանայապետին օրով. ապա Պիոս ԺԱ.ի օրով ստացած էր քահանայութեան
լրումը եպիսկոպոսական ձեռնադրութեամբ. հուսկ Պիոս ԺԲ. Սրբ. Քահանայա-
պետին գերագոյն բարեացակամութեամբ կը բարձրանար ծիրանիի պատուոյն,
հիւսելով վսեմ և սգնուական շեշտով մը Աստուծոյ և Պապին իր երախ-
տագիտութեան զգացումներուն լաւագոյն արտայայտութիւնները: Յիշեց նաեւ
սրբազան կարօտի շեշտով մը իր հեռաւոր մայրը, որ այնքան գուրգուրանքով
անուցած է զինքը Աստուծոյ սուրբ երկիւղին մէջ, յիշեց այն ալեւոր եկեղեցա-
կանը որ իր քահանայական կոչումին առաջնորդած էր զինքը: Յիշեց զոյգ
Մխիթարեան Միաբանութիւնները. յիշեց Լիբանանն ալ, որ իր հինաւորեց մայ-
րիներուն տակ ասպնջականութիւն տուած էր Հայոց Տանն Կիլիկիոյ տարաբախտ
Աթոռին: Յիշեց քաղցր յիշատակով մը «Հաւատոյ Տարածման» Վարժարանը,
ուր անցուցած էր իր ուսանողական թարմ և ծաղկեալ տարիները, իր վար-
ժապետները, նոյնպէս Լեռնեան Հայ Քահանայապետական Կղերանոցը, իր սի-
րելի ազգը որ մայր է սուրբերու և մարտիրոսներու. հուսկ յիշեց արեւելքի բոլոր
Պատրիարքները՝ մաղթելով որ քրիստոնէութեան որրանը՝ Արեւելքը, վերա-
դառնալով առաքելական Ս. Աթոռի միութեան՝ ծաղկի կենսալիր սուրբերով,
մեծ վարդապետներով և ճգնասուն անապատականներով, վերանորոգելով այս-
պէս հին փառքն ու պայծառութիւնը: Վսեմափայլ Ծիրանաւորը վերջացուց իր
գեղեցիկ ուղերձը հրաւիրելով ներկաները մասնակցել իրեն՝ աղօթելու համար
որ Աստուած պահէ Պապը, իր Փոխանորդը երկրիս վրայ, և այս գերագոյն
Համաժողովը յետ արցունքի, վշտի և արիւնի տարիներուն՝ սկիզբն ըլլայ Եկե-
ղեցւոյ և Սրբազան Քահանայապետին համար խաղաղութեան և ցնծութեան նոր
շրջանի մը:

Իսկոյն յետ ուղերձի աւարտելուն՝ Արհիպատիւ արքեպիսկոպոսներ, եպիս-
կոպոսներ և բարձրաստիճան եկեղեցականներ և մի առ մի բոլոր ներկաները
մատուցին իրենց ջերմագին շնորհաւորութիւնները, որոնց իւրաքանչիւրին
անխտիր՝ Վսեմափայլը, իրեն ինքնայատուկ քաղցրախօսութեամբ և արթնա-
մտութեամբ փոխադարձեց շնորհակալութեան պատասխաններ: Զերմագին մաղ-
թանքներու այցելութիւնները շարունակուեցան կէսօրէն վերջ և յաջորդ օրերուն,
յորում բարձրաստիճան անձնաւորութիւնները, զանազան ազգերուն ներկայա-
ցուցիչներ մատուցին իրենց յարգանքը և շնորհաւորութիւնները:

Բ. - ԿԷՍ ՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

20 Փետր. 1946, Զորեքշարթի կէսօրէն վերջ վատիկանեան չքեղ սրահնե-
րէն միոյն մէջ՝ ընտիր և միջազգային հոծ բազմութեան մը ներկայութեան,
կատարուեցաւ ծիրանաւորական Խաչ-գտակին տուելութիւնը: Սրբազան Պապը
նստած իր գահին վրայ, մի առ մի իւրաքանչիւր Նորընտրին գլխուն դրաւ
ծիրանեգոյն Խաչ-գտակը: Սակայն Վսեմ. Աղաճանեան կարդինալը, որ առաջինն

էր ծիրանաւորներուն մէջ, կը ստանար Անոր աստուածաշնորհ ձեռքերէն փո-
խանակ լատինական Խաչ-գտակին, ծիրանեգոյն Գամելաֆթին, ըստ հայ կաթո-
ղիկէ հայրապետական տարազի ձեւին, որուն ճակտին հիսուած էր ոսկեթել
հայրապետական խաչանիշ տէրունեան նշանը: Ապա մի առ մի միւս բոլոր ծիրա-
նաւորները ընդունեցան Խաչ-գտակը: Այս արարողութեան վերջանալուն՝ Վսե-
մափայլ Հոգեւոր Տէրը իր և բոլոր Նորընտրի Ծիրանաւորներու կողմէն հե-
տեւեալ օժոն խօսքերը ուղղեց Սրբազանին, խորին երախտագիտութեան
զգացումներով համակուած:

Սրբազան Հայր,

Խորապէս յուզուած եմ ամենաբարձր պատուոյն համար որ ինձի կ'ըլլայ,
տրուպ ատարելոց, Զեր Սրբութեան Օգոստոսիոս Գահուն առջեւ բարգման ըրարոս
ամենեւ զգայուն և որդիական յարգութեան և երախտագիտութեան զգացումներուն,
որոնցմով լի կը բարխեն սրտերը այս ընտիր երաւին Հովիւներու և Բարձրաստի-
ճան Եկեղեցականներու, զոր Դուք Սրբազան Հայր, հաճեցաք կոչել գերագոյն բա-
րեհաճութեամբ մաս կազմելու Սուրբ Եկեղեցւոյ բարձրագոյն Երեսկոյտին:

Սակայն անպատու՝ խնդրեան և անսահման փառանքեան զգացումներ հետ,
իմ հոգւոյս մէջ կը ծաւալի որդւոյ մը ցնծութիւնը և փառանքութիւնը ամենաւերջի
Հօր առջեւ, որուն մէջ կը մարմնանան Աստուծոյ տիեզերական և անմիջական հայ-
րութիւնը և բարութիւնը. Պապը, հաւատացեալներուն հասարակաց Հայրը, որուն
կարելի է և պետք է պատշաճեցնել Տերտուղիանոսի խօսքերը. «Այսպիսի Հայր
ոչ ոք, այսպիսի բարի ոչ ոք» (յղ. Ապալիս. գլ. Բ.):

Սրբազան Հայր,

Զեր Սրբութեան երջանիկ ընտրութեան վերջ առաքելական Արքիմ, այս
առաջին Համաժողովն է, յորում վճռեցիք ստեղծել Հռոմեական սուրբ եկեղեցւոյ
նոր Կարդինալներ. այս Համաժողովը առանձնաշատուկ կերպով կարեւոր նկարագիր
մը ունի, զոր դուք ինքնին Հայր Սուրբ, հաճեցաք ցոյց տալ Զեր վերջին Երեսկեան
և առիթ խօսած սքանչելի Ողորձին մէջ, առաքելայ աշխարհի ուշադրութեան և
գնահատանքին:

Յատկապէս նշանակալից է այս Համաժողովը, թէ՛ թուին և թէ նորընտիր
Ծիրանաւոր Հայրերուն ծագումին համար, զորս ուղեցիք ընտրել աշխարհի հինգ
մասերէն, տարւ համար կենդանի պատկեր մը եկեղեցւոյ տիեզերականութեան, որուն
կերպով է Հռոմ, «Յաւիտեական Քաղաքը» - Կ'ախորժէիք մատնանշել սիրալիր
զանցօրէն, Քաղաք՝ որուն ամեն որ քաղաքացի է, Քաղաքը Քրիստոսի Փոխանոր-
դին, որուն կ'ողորմէ ընտիր կարողիկէ աշխարհի աշխարհը» (Երեսկեան Ողորձ
1945):

Մեծապէս հանդիսաւոր և գրաւիչ այս պահուն, ուր առաջին անգամ կը տեսնենք
հաւաքուած, Զեր սրբազան և ամենաշարգելի Անձին շուրջ, Հովիւներ և բարձրա-
ստիճան եկեղեցականներ, եկած Զեր կոչին վրայ գրեթէ ամենքն ալ ամենահետաւոր
և տարբեր երկիրներէ, յետ կտրել անցնելու խոր վշտով երկիրներ, քաղաքներ և
գիւղեր՝ երբեմն ծաղկեալ, այսօր վերածուած աղետալի աշխարհներու կոյտի. նախ

